

զեւորտիրին, յորժամ բարբառէրն, ասէ, որպէս թէ ի լուր յարտաբերութիւն կտակի խաչելութեան մեջ ըսյ կենսատուին, լի լինէր լսարանս ողբո՞ւք զանանազին. եւ թէ Կլսւխ ձեր ողջ լիցի եւ կենդանի աղօթք ոտնակացութեան եւ սաղմոսերգութեան նորին ի վերայ ուստերաց եւ գստերաց ձերոց տարածեալ համայնի լիցին: Եւ վասն մեծութեանդ զձիգս մաղթանս ընդ երկայն աւուրս անխարդախապէս պահպանիլ յասելն ի կամս նախասահմանողին, իբրու զետ յորդեալ արտասուք ի բազմախումբ եկեղեցին: Իսկ ի պահ ջրօրհնեայի՝ արտաքոյ եկեղեցւոյս ի դաւթին՝ ի գովարանութեանն հաւաքաբանութիւն սրբալոյս միւռոնին յորժամ հանգիսիւ հանգիսանայր այլազգ լեզուաւ յարտաբերութիւն ըստ պատշաճին, եսսաղձիք, Տաճիկք եւ Յոյնք պշուցեալ թմբբեալ ի զարմացման մնային, թո՛ղ թէ վասն հաշտութեան հայցելն թագաւորաց, եւ քաղաքացւոցս մեծամեծաց զանդորրութիւնս յորժամ լսէինն, որք առեալ ի բերան զմեզ եւ քանեւոյ՞ եւ յունկն ամենից անդրէն զայն համբաւէին: Իսկ ի յեղյեղումն նախորդական տրամատութեան ի դրուատ ճառի միւռոնին՝ յորժամ գողէրն Զսուրբ իւղս եփողին պատճառաւորին ամենայն Հայաստանեայց գլխոյ Տեառն եղիազարու՝ զձեռս բարձէ՛ք, մարդի՛ք, զբազուկս ձեր տարածեցէ՛ք, ասէ, ողորմիս գոչելոյ պահու հարկին. դարձեալ համարիցիս՝ թէ որպէս ի ծնողաց բազմաց անդրանկամեռից ճիշ հեկեկանաց գողման եւ գոչման ձայնք բարձրանային: Զի որ ժողովուրդքս խմբեալ զօրն մեծացուցանել ի խնդութիւն ճոխաբանութեանց յուսային, աստ զիպմամբ այլ իմն ձայն գուժեաց ի Ռօդօն փոքու՝ լալումն, ողբումն եւ աշխարհումն յոյժ. Գրիգորիս լայր զանձն իւր եւ ոչ կամիւր մխիթարիլ, զի այդր ոչ զիպեալ վախճանի նորա: Եւ մեզ իսկ որպէս թէ ի մեծի Ուրբաթի ի ճառ